

Պահպանել մշակութային տեխնոլոգիան

«Ռազմավարական Չարգացման Գործակալություն» ՀԿ-ի կողմից տարածաշրջանում անասնապահության զարգացման նպատակով իրականացվող մի շարք գործընթացների թվում իրականացվում է նաև “Անասնակերի արտադրության արդյունավետ փորձի խթանում թիրախային համայնքներում” ենթաձեռնարկը: Այն նպատակ ունի աջակցելու թիրախային համայնքներում բարձրարժեք կերատեսակների տարածմանը, բարձր բերք ունենալուն, ծախսերի կրճատմանը և անասունների լիարժեք կերակրման արդյունքում եկամուտների ավելացմանը:

Այդ գործընթացներն իրականացնելու համար կարևորագույն պայմաններ են համարվում հողի ճիշտ մշակությունը՝ վարի որակը, հողի պարարտացումը, որակյալ սերմացուներով ցանքի ճիշտ ձևի պահպանումը, բույսերի սնուցումը և այլն: Որակյալ վարի հիմնական նպատակն է ստեղծել վարելաշերտի փխրուն շերտ, որի հետևանքով լավանում է օդի և ջրի թափանցումը հողի մեջ, ուժեղանում է հողի կենսաբանական գործունեությունը, ստեղծվում է ցանվող սերմերի համար նպաստավոր պայմաններ, բացի այդ հողի մշակմամբ պայքար է տարվում մոլախոտերի և բույսերի վնասատուների դեմ:

Բույսերի աճի ու զարգացման համար կարևորագույն գործոն է համարվում նաև պարարտանյութերի արդյունավետ կիրառումը, քանի որ պարարտացման միջոցով կարգավորվում է բույսերի սննդային ռեժիմը հողում, լրացվում է սննդանյութերի այն պաշարը, որն անհրաժեշտ է բույսերի աճման ու զարգացման համար: Ճիշտ պարարտացման միջոցով հնարավոր է բարձրացնել ինչպես բերքի քանակը, այնպես էլ բարելավել նրա որակը: Պարարտանյութերի ազդեցությամբ հողը ձեռք է բերում լավ հատկություններ. նկատելի չափով ավելի քիչ ջուր է գոլորշիացնում հողի մակերեսից, որի շնորհիվ նրա մեջ եղած ջրի պաշարն ավելի մեծ չափով է օգտագործվում բույսերի կողմից:

Ենթաձեռնարկի շրջանակներում ընդգրկված ֆերմերները, որոնք պետք է կատարեն զարնանացան զարու ցանք կորնզանի կամ առվույտի ենթացանքով անհրաժեշտ է նախատեսված հողատարածքի վրա հավասարաբաշխափ ցրեն մեկ հեկտարի հաշվով 200 կգ ֆոսֆորական և 96 տոկոս ազոտոլ նյութ պարունակող 82 կգ կալիումական պարարտանյութեր ու նոր կատարեն վարի աշխատանքները, իսկ այն ֆերմերները, որոնց դաշտը արդեն վարված է, պետք է պարարտանյութերը տան կրկնավարի կամ կուլտիվացիայի տակ, այնուհետև կատարեն զարու և կորնզանի ցանքը:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքը շատ կարևոր ագրոտեխնիկական միջոցառում է, որը ճիշտ ու ժամանակին կատարելու դեպքում ապահովում է բույսերի աճն ու զարգացումը, բարձրացնում է բերքատվությունը: Ցանքը պետք է կատարել

այնպես, որ սերմերն ընկնեն խոնավ հողը և տեղաբաշխվեն հողում հավասարաչափ խորության մեջ, նրանց ծածկող հողաշերտը լինի փխրուն և չարգելակի օդի ազատ մուտքը դեպի սերմերն ու չխանգարի ծիլերի հողի մակերես ազատ դուրս գալուն, սերմերը ծլեն արագ ու համերաշխ, բույսերն ունենան սննդային, խոնավության և լուսային լավ պայմաններ: Ցանքի որակը մեծ չափով կախված է հողի հիմնական ու նախացանքային մշակությունից: Մշակաբույսերի բերքի քանակի և որակի վրա մեծ ազդեցություն է թողնում ցանքի կիրառված ձևը:

Գոյություն ունեն ցանքի 2 ձև՝ **շաղացան** և **շարքացան**:

Շաղացանը չի բավարարում ցանքին առաջադրվող պահանջները: Ցանվող սերմերը ցանքատարածության վրա բաշխվում են անհավասարաչափ, մյուս կողմից պահանջվում է լրացուցիչ աշխատանք ցանքից հետո սերմերը հողի մեջ խառնելու համար: Շաղացանի դեպքում սերմերը հողի մեջ հավասար խորությամբ չեն թաղվում՝ մի մասը երես և մի մասն էլ մնում է հողի մակերեսին: Նորմալ ծիլեր են տալիս միայն բավարար խորության մեջ ընկածները: Շատ խորը ընկածները չեն ծլում, երես ընկածները չեն ծլում այնքան ժամանակ, քանի դեռ անձրևներ չեն տեղացել, սակայն անձրևներից հետո ծլածները հողը չորանալուն պես ծլաչոր են լինում: Հողի մակերեսին մնացածները բոլորովին չեն ծլում և թռչունների ու միջատների կեր են դառնում: Այդ պատճառով շաղացանի դեպքում ստացվում է անհամերաշխ ծիլեր, իսկ մոլախոտերի աճման համար ստեղծվում են ավելի նպաստավոր պայմաններ, որոնք, արագ աճելով, ճնշում են մշակովի բույսերին և արդյունքում ստացվում է ցածր բերք:

Գյուղատնտեսության մեջ ցանքի հիմնական ճիշտ ձևը **շարքացանն** է, որը վերացնում է շաղացանի բոլոր նշված թերությունները, ապահովելով սերմերի հավասարաչափ բաշխումը ցանքատարածության վրա, և պահպանում սերմի համահավասար ու սահմանված խորությունը, դրա շնորհիվ սերմերը հող մտցնելու համար չի պահանջվում լրացուցիչ աշխատանք և ցանքի նորմայի ավելացում. կրճատվում են ծախսերը: Շարքացանով ցանքի արդյունքում ստացվում են ուժեղ և համերաշխ ծիլեր, որի հետևանքով նվազում է ցանքերի մոլախոտերով ճնշվելու վտանգը և ապահովում բարձր բերքի ստացումը: Ելնելով մշակվող բույսի առանձնահատկություններից՝ շարային ցանքը կատարվում է՝



ա. համատարած, նեղ շարքերով (ցորեն, գարի, աշորա, վարսակ, խոտաբույսեր և այլն),

բ. լայն շարքերով (կարտոֆիլ, ճակնդեղ, եգիպտացորեն, սորգո, արևածաղիկ և այլն):

Արտադրության մեջ, հատկապես հացահատիկի և բազմամյա խոտաբույսերի համար, կիրառվում է նեղաշար ցանք: Այս դեպքում շարքերի հեռավորությունը լինում է 7.5 -8.0 սմ, իսկ սերմերը ցանվում են իրարից 3 -4 սմ հեռավորության վրա: Ցանքի այս ձևը ապահովում է բույսերին բավարար սնման մակերես և բարձր բերքատվություն: Նեղաշար ցանքի համար օգտագործում են շարքացաններ (ՍՈԻԲ -48, ՍՈԻԲ -48Բ, ՍԶՈԻ -3.6): Ցանքի այս ձևը պահանջում է հողի նախացանքային լավ մշակում: Ցանքից հետո, երբ բույսերն աճել են և գտնվում են թփակալման փուլի սկզբում, պետք է կատարել ցանքերի սնուցում ազոտական պարարտանյութով՝ մեկ հեկտարին տալով 250 կգ ազոտական պարարտանյութ: